# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Կաթնաջուր համայնք,
գ. Կաթնաջուր 13 փողոց, 1 շենք
հեռ. +374 99-00-03-02

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվար 2019թ. թիվ 12-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով, ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 06-ի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետին համապատասխան՝

Որոշում եմ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Առաջարկել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարին՝

1) մինչև 2019 թվականի հունիսի 01-ը՝ համաձայն սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի, կազմել և հաստատել «Համայնքի տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլան» և պլանով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով համայնքի բյուջեից հատկացնել համապատասխան միջոցներ.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 30-ը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքի տարածքում իրականացված բնածին և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավար՝ Ա. Պապոյան

Հավելված 1

ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր

համայնքի ղեկավարի 2019թ.

փետրվարի 18-ի թիվ 12-Ա որոշման

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | |
| 1. | ՈՒսումնասիրել և գնահատել սելավատարների վիճակը | Համայնքի ղեկավար | Մինչև 01.06.2019թ. |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար: | | |
| 3. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում շինարարական և դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | | Մշտական |
| 4. | Պատրաստի վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով: | Համայնքի ղեկավար | Մինչև 01.06.2019թ. |
| 5. | Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու համար: | Կաթնաջուր համայքի բուժկետի վարիչ Ք. Ռստակյան | Մինչև 01.06.2019թ. |
| 6. | Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները: | Համայնքի ղեկավար | Մինչև 01.06.2019թ. |
| | **2. Հիմնական միջոցառումներ** | | |
| 7. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Համայնքի ղեկավար | Մշտապես |
| 8. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 9. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և | Տարահանման հանձնաժողովի նախագահ՝ համայնքի | Անհրաժեշտության դեպքում |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգ-նողական աշխատանքներ: | Համայնքի ղեկավար | Ըստ անհրաժեշ-տության |
| 11. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների: | Համայնքների ղեկավար | Անհրաժեշտու-թյան դեպքում |
| 12. | Ապահովել կապը համայնքի և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև: | Հայփոստի վարիչ Մարինե Միքայելյան | |
| 13. | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն: | Էներգետիկ Հ. Հովհաննիսյան | |

Համայնքի ղեկավար Ա. Պապոյան